ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«16» 03 2026թ.
№ ԱԼԱՇՏ/556

«Օվեր Փլեյ » ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 02327452)
տնօրեն Վ. Բարսեղյանին
հասցե՝ ք. Երևան, Սևանի 116
էլ. հասցե՝ Givova-arm@mail.ru
հեռ. 044-33-00-30

ՀՀ պաշտպանության նախարարության և «Օվեր Փլեյ» ՍՊԸ-ի միջև 28.11.2025թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-25-33/2-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 11 (14)-րդ և 14 (30)-րդ չափաբաժինների շրջանակներում «Օվեր Փլեյ» ՍՊԸ -ն մինչև 15.12.2025թ. պետք է մատակարարեր համապատասխանաբար 10 հատ մարմնամարզական պարաններ (Ձգման պարան) և 151 հատ նռնակներ (Մարզական նռնակ): Սակայն «Օվեր Փլեյ» ՍՊԸ -ի կողմից 13.01.2026թ. ներկայացվել են դիմում այն մասին, որ Ընկերությունը չի կարող մատակարարել վերոնշյալ Պայմանագրի 11 (14)-րդ և 14 (30)-րդ չափաբաժինների մասով նախատեսված ապրանքները և միևնույն ժամանակ պատրաստակամություն է հայտնել վճարելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանագրի և որակավորման ապահովումների գումարները:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի) և հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2026թ. մարտի 16-ին միակողմանի մասնակի լուծել է վերոնշյալ Պայմանագիրը չմատակարարված ապրանքների մասով:

Ելնելով վերոգրյալից՝ տեղեկացնում եմ, որ Պայմանագրի միակողմանի մասնակի լուծման արդյունքում պայմանագրի ապահովման գումարը կազմում է 59 900 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է փոխանցել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին, իսկ որակավորման ապահովման գումարը կազմում է 89 850 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է փոխանցել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «Օվեր Փլեյ» ՍՊԸ -ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 5 323 ՀՀ դրամ՝ որպես

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն), որը հաշվարկված է մինչև 13.01.2026թ. (11 (14)-րդ և 14 (30)-րդ չափաբաժինների մասով) և ((14)-րդ և 14 (30)-րդ չափաբաժինների մասով) 13.01.2026թ. դրությամբ 2 957 ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետի համաձայն):

Միևնույն ժամանակ հայտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Այս կապակցությամբ տեղեկացնում եմ, եթե մինչև 2026թ. մարտի 26-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված գումարները, ապա «Օվեր Փլեյ» ՍՊԸ -ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշվեհամարներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2026թ. մարտի 26-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2070 սենյակ:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «Օվեր Փլեյ» ՍՊԸ -ի կողմից պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, ինչպես նաև հաշվարկված տույժի ու տուգանքի գումարները սահմանված ժամկետում չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարությունը կձեռնարկի միջոցներ դրանց գանձելու ուղղությամբ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ